

**5.12. 2009թ. դեկտեմբեր ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2009թ. դեկտեմբերին ունեցել է հետևյալ բնութագիրը.

**Օդային ավազանի որակի մոնիթորինգ:** Դեկտեմբերին հանրապետության մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգ իրականացվել է Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում տեղակայված 12 մշտական լաբորատոր դիտակայանների, Երևան, Ալավերդի, Վանաձոր, Գյումրի, Հրազդան, Ծաղկաձոր, Վաղարշապատ և Աբովյան քաղաքների պասիվ նմուշառման 147 դիտակետերի, Ամբերդ գյուղում տեղադրված ավտոմատ կայանի միջոցով:

Մթնոլորտային օդի 3544 փորձանմուշներում որոշվել են հիմնական աղտոտիչ նյութերի՝ փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ազոտի օքսիդի, գետնամերձ օզոնի, բենզոլի, տոլուոլի, քսիլոլի և ածխածնի մոնօքսիդի պարունակությունները:

**Մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգի անցկացման համար տեղակայված դիտակայանների, դիտակետերի և վերցված փորձանմուշների քանակական բաշխվածությունն ըստ քաղաքների, 2009թ. դեկտեմբեր**

(միավոր)

	Դիտակայանների		Դիտակետերի	
	քանակը	փորձանմուշների քանակը	քանակը	փորձանմուշների քանակը
Երևան	4	1356	27	158
Արարատ	1	78	-	-
Ալավերդի	2	104	18	140
Վանաձոր	3	800	24	189
Գյումրի	1	27	24	188
Հրազդան	1	78	12	95
Ծաղկաձոր	-	-	14	112
Վաղարշապատ	-	-	16	123
Աբովյան	-	-	12	96
<b>Ընդամենը</b>	<b>12</b>	<b>2443</b>	<b>147</b>	<b>1101</b>

Երևան քաղաքի մթնոլորտային օդում նոյեմբեր ամսվա համեմատ ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաները նվազել են 1.3-ական անգամ:

**Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՄԹԿ) ք.Երևանի մթնոլորտային օդում, 2009թ. դեկտեմբեր**

(մգ/մ<sup>3</sup>)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՄԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	0.64	0.13	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.38	0.05	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.307	0.090	0.085	0.04
Ազոտի օքսիդ	0.19	0.04	0.40	0.06
Գետնամերձ օզոն	0.070	0.048	0.16	0.03
Բենզոլ	0.178	0.015	1.5	0.1
Տոլուոլ	0.679	0.008	0.6	0.6
Քսիլոլ	0.157	0.013	0.2	0.2
Ածխածնի մոնօքսիդ	-	2.35	5	3

**Երևան քաղաքի** պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Գյումրի քաղաքի** մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.9 անգամ: Նոյեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի էական փոփոխություն չի դիտվել: Գյումրի քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 3.7 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 1.2 անգամ:

**Վանաձոր քաղաքի** մթնոլորտային օդում նոյեմբեր ամսվա համեմատ ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.3 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 1.4 անգամ:

**Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց ՍԹԿ-ները ք.Վանաձորի մթնոլորտային օդում, 2009թ. դեկտեմբեր**

(մգ/մ<sup>3</sup>)

Աղտոտիչ կոյության անվանումը	Կոնցենտրացիաները		ՍԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	-	0.30	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.75	0.14	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.281	0.063	0.085	0.04
Ազոտի օքսիդ	0.16	0.03	0.40	0.06

**Հրազդան քաղաքի** մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.8 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 2.5 անգամ: Հրազդան քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 4.0 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 2.0 անգամ:

**Ալավերդի քաղաքի** դիտակայաններում դիտարկումներ կատարվել են միայն մթնոլորտային օդում փոշու պարունակության որոշման համար: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է թույլատրելի նորմայի սահմանում: Ալավերդի քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.8 անգամ, իսկ ազոտի երկօքսիդինը՝ ՍԹԿ-ից ցածր է եղել 2.6 անգամ:

**Արարատ քաղաքի** մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.5 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 3.6 անգամ: Նոյեմբեր ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.2 անգամ:

**Օաղկաձոր քաղաքի** մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 6.4 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 2.5 անգամ:

**Վաղարշապատ քաղաքի** մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 4.1 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 1.1 անգամ:

**Աբովյան քաղաքի** մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 4.5 անգամ, իսկ ազոտի երկօքսիդինը՝ հավասար ՍԹԿ-ին:

Դեկտեմբեր ամսին ֆոնային կոնցենտրացիաների որոշման նպատակով Ամբերդ գյուղում ավտոմատ եղանակով վերցվել է օդի 93 և փոշու 31 փորձանմուշ: Օդի

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

փորձանմուշներում որոշվել են ազոտի երկօքսիդի, ծծմբի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլոր, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 31 քիմիական տարրերի պարունակությունները: Մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի որոշման համար կատարվել է նաև 868 դիտարկում: Գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 3.3 անգամ, իսկ ազոտի երկօքսիդինը և ամոնիակինը՝ ՍԹԿ-ից ցածր, համապատասխանաբար՝ 13.3 և 57.1 անգամ:

**Ամբերդ գյուղի ավտոմատ կայանի հարակից տարածքի տեղումներում վերահսկվող նյութերի պարունակությունը, 2009թ. դեկտեմբեր**

(մգ/դմ<sup>3</sup>)

Ցուցանիշներ	Նմուշների վերցման ամսաթիվը					
	09-10	13-14	16-17	17-18	18-19	25
Զրաձնային ցուցիչ	6.74	6.62	5.87	6.16	7.12	6.74
Նիտրատ իոն	3.85	1.74	2.45	1.13	0.03	1.48
Սուլֆատ իոն	4.43	2.45	2.26	1.49	3.26	1.60
Քլորիդ իոն	0.40	0.23	0.31	3.27	1.34	6.88
Տեսակարար էլեկտրահաղորդականություն, $\mu\text{Միմ/սմ}$	50	18	15	25	77	37
Ընդհանուր ֆոսֆոր	0.224	0.203	0.318	0.002	0.421	0.191
Ամոնիում իոն	1.260	0.563	0.521	0.797	0.675	0.882
Նատրիում	0.417	0.185	0.144	1.947	3.849	3.048
Կալիում	0.969	0.208	0.115	1.428	5.527	2.030
Մագնեզիում	0.264	0.100	0.066	0.101	3.183	0.248
Կալցիում	6.327	1.837	0.923	1.119	5.584	1.510
Երկաթ	0.160	0.071	0.063	0.065	0.047	0.226
Կապար	0.003	0.001	0.001	0.003	-	0.003
Կարմիրում	-	-	-	-	-	0.001
Պղինձ	0.002	-	0.003	0.012	0.001	0.011
Ցինկ	0.015	0.008	0.014	0.077	0.001	0.047
Քրոմ	0.001	-	-	-	-	0.001
Արսեն	0.001	-	-	-	0.001	-
Նիկել	0.001	-	-	0.002	-	0.003

**Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ:** 2009թ. դեկտեմբերին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 25 գետերի, Կեչուտի ջրամբարի և Երևանյան լճի 60 դիտակետերում: Վերցված 60 փորձանմուշներում որոշվել է 44-48-ական ցուցանիշ: